ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/305

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Մասնակից՝ «Մանմար77» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Մանմար77» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ն. Հովհաննիսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ք. Երևան, Ծ. Իսակով 10 հասցեում գտնվող վարչական շենքի վերանորոգման աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 27.10.2021թ.-ի թիվ 26/26-1/17599-2021 գրությամբ «Մանմար77» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 20.10.2021թ.-ի թիվ 1/18-2/66239-2021 գրության հիման վրա, 27.10.2021թ.-ին «Մանմար77» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 27.10.2021թ.-ին:

28.10.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/305 համարի ծածկագիրը:

03.11.2021թ.-ին և 26.11.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 03.11.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.11.2021թ.-ին:

2. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 20.10.2021թ.-ի թիվ 1/18-2/66239-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՀՀՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/24 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Մանմար77» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերի պահանջներին: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 526-Ն որոշման

47-րդ կետի (այսուհետ՝ կարգի) 14.10.2021թ-ին կազմակերպությունը ծանուցվել է ներկայացնել հայտի շտկված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում փաստաթղթերը չեն շտկվել և կարգի 42-րդ կետի 2 համաձայն հայտը մերժվել է:

Հիմք ընդունելով կարգի 45-րդ կետի պահանջները՝ «Մանմար77» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար Ձեզ եմ ներկայացնում ընթացակարգի փաստաթղթերը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/24» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Մանմար77» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Մանմար77» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 28.10.2021թ.-ի գրությամբ դիմել է «Մանմար77» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.10.2021թ.-ի թիվ 26/26-1/17599-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 02.11.2021թ.-ին ներկայացրած գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Լիովին գիտակցում եմ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՀՀՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/24 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Մանմար77» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղերը չեն համապատասխանել հրավերի պահանջներին և համապատասխան ժամկետում մեր կողմից չեն իրականացվել համապատասխան շտկումները, ինչի հետևանքով ՀՀ ֆինանսների նախարարությունը 27.10.2021թ.-ին թիվ 26/26-1/17599-2021 գրությամբ նախաձեռնել է գործընթաց՝ «Մանմար77» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Չգիտեմ, որքանով մեր կողմից ստորև ներկայացվող պարզաբանումները կօգնեն շտկել իրավիճակը, սակայն ուզում եմ նշել, որ դա մեր նորաստեղծ կազմակերպության

առաջին անփորձ մասնակցությունն էր պետական գնումների գործընթացին, որը մենք ձախողեցինք:

Իրականում, ստացել ենք համապատասխան ծանուցումը՝ շտկումներ իրականացնելու համար, սակայն հիվանդության պատճառով ֆիզիկապես ի վիճակի չեմ եղել կատարել անհրաժեշտ շտկումները:

Հետագայում, մեր ՍՊԸ կողմից ներկայացված այլ հայտերը եղել են համապատասխան շտկումներով:

Խնդրում եմ, ներողամիտ գտնվել «ՄԱՆՄԱՐ77» ՍՊԸ-ի նկատմամբ և հնարավորության դեպքում չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2021/305 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ք. Երևան, Ծ. Իսակով 10 հասցեում գտնվող վարչական շենքի վերանորոգման աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով 28.09.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մանմար77» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել գնման ընթացակարգին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 14.10.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Մանմար77» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, Հավելված 1-ը, 2-ը և 2.1-ը չեն համապատասխանում հրավերով սահմանված

պայմաններին, ինչպես նաև չեն ներկայացվել հրավերի 2.4 կետով նախատեսված ոչ գնային պայմանները:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել նիստը և ծանուցել «Մանմար77» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 14.10.2021թ.-ին www.armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ նույնաբովանդակ ծանուցում է ուղարկվել Մասնակցի cru.unaca@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

vii. Հանձնաժողովի 18.10.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Մանմար77» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել անձանագրված անհամապատասխանությունների շտկումները:

viii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետը, որոշել է մերժել «Մանմար77» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.10.2021թ.-ի թիվ 26/26-1/17599-2021 գրությամբ «Մանմար77» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Նույն ենթակետի «ժ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում՝ հայտերի գնահատման համար հրավերով պահանջված փաստաթղթերը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային

առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից Ք. Երևան, Ծ. Իսակով 10 հասցեում գտնվող վարչական շենքի վերանորոգման աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով 24.09.2021թ.-ին հայտարարված «ՀՀՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ք. Երևան, Ծ. Իսակով 10 հասցեում գտնվող վարչական շենքի վերանորոգման

աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով 28.09.2021թ.-ին հայտարարված «ՀՀՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.10.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Մանմար77» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, Հավելված 1-ը, 2-ը և 2.1-ը չեն համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, ինչպես նաև չեն ներկայացվել հրավերի 2.4 կետով նախատեսված ոչ գնային պայմանները, ինչով պայմանավորված որոշում է կայացվել մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել նիստը և ծանուցել «Մանմար77» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից 14.10.2021թ.-ին www.armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ նույնաբովանդակ ծանուցում է ուղարկվել Մասնակցի cru.unaca@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին: Սակայն Հանձնաժողովի 18.10.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Մանմար77» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել անձանագրված անհամապատասխանությունների շտկումները, ինչով պայմանավորված որոշում է կայացվել մերժել «Մանմար77» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի

կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում

չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Մանմար77» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել գնման ընթացակարգին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.10.2021թ.-ի թիվ 26/26-1/17599-2021 գրությամբ «Մանմար77» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/305 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Մանմար77» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**